ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 464
հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Շիրակի մարզի Աշոցք համայնքը (Բավրա բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ
(Աշոցք համայնքի Բավրա բնակավայրի գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝

1. *ՀՀ Շիրակի մարզի Աշոցք համայնքը (Բավրա բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Աշոցք համայնքի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝*

ՀՀ Շիրակի մարզի Աշոցք համայնքի (Բավրա բնակավայրի) Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
08-026-0012-0007 կադաստրային ծածկագրով 0.01007 հա մակերեսով բնակավայրի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողեր	08-026-0012-0007 կադաստրային ծածկագրով 0.01007 հա մակերեսով էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների՝ կապի հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

- Անհրաժեշտ է կառուցապատման հետագա գործառույթներն իրականացնել ապահովելով ՀՀ առողջապահության նախարարության գրությամբ ներկայացված պահանջը՝ բջջային կապի կայանի շահագործման ընթացքում անհրաժեշտ է պահպանել ՀՀ առողջապահության նախարարի 2006 թվականի օգոստոսի 16-ի «Ռադիոհաճախականության տիրույթի էլեկտրամագնիսական ճառագայթումներ (ՌՀ ԷՄՃ)» սանիտարական կանոններ և նորմեր N 2.1.8-010-06 հաստատելու մասին» թիվ 933-Ն հրամանի պահանջները:

3. Աշոցք համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Բավրա բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Շիրակի մարզի Աշոցք համայնքի (Բավրա բնակավայրի) հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ա.Ղուլարյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Հ.Դավթյան

Երևան, «18» «դեկտեմբերի» 2023 թ.